

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՁԵՐԱՆԳԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

ԱՄԱԼՅԱ, ԽԱԶԱՏԲԱՆ, ՄԱՐԻՆԱ ԳԱԼՈՒՍՏՈՎԱ

Հնչյունաբանության մեջ գոյություն ունեն հնչերանգի տարբեր բնորոշումներ. հայրենական լեզվաբանության մեջ ընդունված է, որ այն մի շարք բաղադրիչների բարդ միասնություն է, որի մեջ մտնում են՝ հիմնական տոնի բարձրությունը (մեղեդայնությունը), շեշտը, տեմպը, ռիթմը և դադարը¹: Զայնաբանական մակարդակում այդ հատկանիշները արտացոլվում են հիմնական տոնի հաճախականությամբ, ուժգնությամբ և սևողությամբ:

Անգլերենի հնչյունաբանական գրականության մեջ սովորաբար տարբերում են շեզոֆ և հուզակաճ հնչերանգ: Չեզոքը ավելի քիչ է կապված ենթատեքստի հետ, չի արտահայտում այլևայլ իմաստներ և չի առանձնացնում կամ ընդգծում նախադասության որևէ բառ, մինչդեռ հուզական հնչերանգն արտահայտում է այդպիսի ենթատեքստային իմաստներ և հաճախ ընդգծում է նախադասության որևէ անդամ՝ հակադրելով այն մեկ ուրիշի²: Դ. Քրիստալի կարծիքով չկա մի հնչադասություն, որը զուրկ է որևէ հուզականությունից³: Նույնիսկ ամենաչեզոք փաստ արտահայտող նախադասությունը կարելի է որակավորել որպես «սառը», «անտարբեր» կամ «անկիրք»՝ պիտակներ, որոնք ինքնին արդեն հուզականություն արտահայտելու միջոցներ են: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ երկու տարբեր լեզուների հնչերանգային կառուցվածքի ուսումնասիրության համար ընտրվեն հուզական տեսակետից նույնատիպ հնչադասություններ:

Հայտնի է, որ կան այնպիսի հնչերանգային կառույցներ, որոնք կարող են ճիշտ ընկալվել մի լեզվի կողմից և կորսվել, բաց սխալ, մեկնաբանվել այլ լեզվի կողմից: Օրինակ՝ հայերենի քաղաքավարական մի շարք ձևերը (նստեցեք, տվեք, համեցեք), որոնք արտասանվում են իջնող տոնով, անգլիացիների ընկալմամբ կարող են դիտվել որպես կոպիտ ու անքաղաքավարի, քանի որ իրենց լեզվում նման դիմողական արտահայտությունները արտասանվում են բարձրացող տոնով և անպայման please «խնդրեմ» բառի զուգակցությամբ: Ուստի միշտ անհրաժեշտ է ճշտել և պահպանել համեմատվող լեզուների հնչադասությունների հուզական համարժեքությունը: Այս գործառնությունից բացի հնչերանգը ունի նաև քերականական ֆունկցիա. նրա միջոցով է արտահայտվում և ձևավորվում այս կամ այն նախադասությունը: Եվ այս երկու գործառնությունները հաճախ ծածկում են մեկը մյուսին և գրեթե միշտ հանդես են գալիս «նվազ» կամ «առավել» հարաբերությամբ:

Տարբեր լեզուների հնչերանգային կառույցների զուգադրական ուսումնասիրությունը նախ և առաջ ենթադրում է համապատասխան նպատակադրում ունեցող հնչադասությունների ընտրություն, որն իր հերթին ենթադրում է

¹ Л. Р. Зиядер, Общая фонетика, М., 1979, с. 273; В. А. Артемов, Метод структурного анализа речевой интонация, М., 1962, с. 42; Ю. С. Степанов, Основы языкознания, М., 1966, с. 201; V. A. Vassilyev, English phonetics (a normative course), Leningrad, 1973, с. 130.

² Г. П. Торсуев, Фонетика английского языка, М., 1950, с. 228.

³ D. Crystal, Prosodic systems and intonation in English, Cambridge univ. press, 1975, с. 272.

նմանատիպ խոսքային իրադրությունների ընտրություն, որոնցում իրականացվում են տվյալ հնչադասությունները: Այս առումով ավելի նպատակահարմար է համեմատել առավել բնորոշ իրադրությունները կենդանի խոսակցական լեզվում:

Հարցական հաղորդակցական տիպը ամենից ավելի ուսումնասիրվածն է լեզուներում, մասնավորապես անգլերենում: Հայերենի հարցական նախադասությունների հանգամանալից դասակարգումը և որոշ տիպերի հնչերանգի ուսումնասիրությունը կատարել է Ս. Ղուկասյանը⁴: Սակայն այն անհրաժեշտ չափով դեռ ուսումնասիրված չէ:

Հարցական նախադասության հնչերանգը որոշվում է հարցի տեսակով և նրա արտահայտման քերականական միջոցներով: Շարահյուսական տեսակետից հարցական նախադասությունները ինչպես անգլերենում⁵, այնպես էլ հայերենում բաժանվում են հետևյալ տիպերի.

1. Առանց հարցական բառի հարցումներ, որոնք կարող են ստանալ «այո» կամ «ոչ» պատասխան (Գնա՞նք կինո):

2. Հարցական բառով հարցումներ, որոնք պահանջում են կոնկրետ (հանգամանալից) պատասխան (Ո՞ր ես գնալու ամառը):

3. Ընտրանքային հարցումներ, որոնց ժամանակ լսողից պահանջվում է կատարել ընտրություն երկու կամ ավելի ընտրանքներից (Սո՞ւրճ ես ուզում, թե թեյ):

4. Կցորդային հարցումներ, որոնց ժամանակ հարցնողը սպասում է իր մտքի հաստատմանը (Հետաքրքիր գիրք է, չէ՞):

Որպես փորձառական նյութ օգտագործել ենք վերը նշված հարցատիպերը, որոնք արտասանվել են համապատասխան խոսքային իրավիճակներում: Անգլերեն լեզվի համար օգտագործված են գրանցված երկխոսություններ, որոնց արտասանողները անգլիացիներ են: Հայերենի համար կազմվել են համապատասխան երկխոսություններ նույնպիսի իրադրությամբ և ընթերցվել հայերի կողմից: Փորձերն արվել են ԳԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության լաբորատորիայում:

Փորձերին մասնակցել են 4 կին և 4 տղամարդ՝ բանասիրական կրթությամբ: Նրանց հանձնարարվել է ընթերցել երկխոսությունները:

Մագնիսոֆոնի վրա գրանցված երկխոսություններից ընտրվել են 24 հարցական նախադասություններ՝ տարբեր տիպի հարցումներով: Դրանց լսողական ուսումնասիրության ժամանակ ուշադրություն է դարձվել հատկապես հետևյալ հանգամանքների վրա. 1. շեշտերի բաշխումը հնչադասության մեջ, 2. գլխավորաշեշտ վանկի (հնչադասության միջուկի) որոշումը, 3. տոնի փոփոխման ուղղությունը (իջնող, թե բարձրացող), 4. հնչադասության ավարտի տոնը:

Լսողական վերլուծությունը կատարել են 10 ունկնդիրներ: Վերջիններիս տրվել են հարցաթերթիկներ՝ ընտրված հնչադասություններով և պահանջվել է պատասխանել տրված հարցերին: Այնուհետև այդ նույն հնչադասությունները մագնիսոֆոնից գրանցվել են ինտոնոգրաֆի վրա ու մշակվել: Ստացված արդյունքները համեմատվել են լսողական վերլուծության արդյունքների հետ. առանձնակի ուշադրություն է դարձվել հիմնական տոնի փոփոխմանը:

Հիմնական տոնի առաջատար դերը նախադասության հնչերանգային կառուցվածքում ապացուցված է բազմաթիվ փորձառական ուսումնասիրու-

⁴ Ս. Վ. Ղուկասյան, Հարցական նախադասությունների հնչերանգը (առանց հարցական բառի հարցումներ), (սնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 76):

⁵ А. М. Антипова, Интонация английского языка (учебное пособие), М., 1959.

թյուններով, որոնք կատարված են թե՛ Սովետական Միությունում, թե՛ արտասահմանում⁶:


Այժմ քննենք փորձերից ստացված արդյունքները:

Նույնաց հարցակաճ բառի հարցումներում ոչ բոլոր ունկնդիրներն են անսխալ որոշել գլխավորաշեշտ վանկը: Բանն այն է, որ հայերեն նախադասություններում շեշտի նշանը դիտավորյալ չենք դրել, թողնելով այն փորձարկողի հայեցողությանն ու լսողությանը (փորձարկվողն ինքը պետք է դնի նշանը համապատասխան վանկի վրա՝ լսելով արտասանվածքը): Ստացված պատասխաններից և ինտոնոգրամներից պարզվում է, որ գլխավորաշեշտ վանկը հայերենում միշտ ունի բարձրացող տոն, ընդ որում, նկատվում է տոնի կտրուկ բարձրացում: Այս երևույթը նշել է Ա. Խաչատրյանը հարցական և բացականչական հնչադասությունների համեմատությունն ուսումնասիրելիս⁷, նշելով, որ այդ երկու տիպի հնչադասություններում էլ կատարվում է տոնի բարձրացում, սակայն հարցականի ժամանակ այն ավելի կտրուկ է: Վերլուծված հնչադասություններում ետշեշտ վանկերի բացականչության դեպքում հնչադասության ավարտի տոնը բարձրացող է:

Հնչերանգի պատկերը ներկայացնելու համար օգտվում ենք Ռ. Կինգզոնի կողմից կիրառվող նշանների համակարգից, որտեղ հորիզոնական գուգահեռ գծերը ցույց են տալիս ձայնածավալի վերին ու ներքին սահմանները, անշեշտ վանկերը նշվում են կետերով, իսկ շեշտվածները՝ գծիկներով, և դրանց դիրքերը հորիզոնական գծերի սահմանում ցույց են տալիս այդ վանկերի տոնի համեմատական բարձրությունն ու ցածրությունը. օրինակ՝

Աջ կողմում:

Ստամոսի ցավեր ունե՞ք:



Որոշ հնչադասություններում նկատվում են տարբերակներ: Այսպես, երբ Առաջ այդպիսի ցավեր ունեցե՞լ եմ նախադասությունը կարդացվել է նախավերջի վանկի շեշտադրումով (այսինքն՝ շեշտվել է ունեցե՞լ բառը), ապա վերջին եմ վանկը արտասանվել է ցածր տոնով, ուրեմն ամբողջ հնչադասության ավարտի տոնը իջնալ է: Այս հնչադասության համար ստացվել է մեկ այլ տարբերակ՝ երկու հավասարապես ուժեղ շեշտերով՝ —առաջ և —ել վանկերի վրա: Մյուս՝ անշեշտ վանկերը, արտասանվել են միատեսակ՝ ցածր տոնով, որը ստեղծում է արտասանվածքի որոշ միապաղաղություն (մինչև գլխավորաշեշտ վանկը՝ հնչադասության միջուկը):

Ինտոնոգրամների տվյալներով հիմնական տոնի բարձրացման չափը գլխավորաշեշտ վանկում (Աջ կողմում) հավասար է 12 կիսատոնի, իսկ համապատասխան անգլերեն հնչադասությունում (Your right side?)՝ 7 կիսատոնի (գծ. 1):


Այս վերջին հնչադասությունները երկու լեզվում էլ ունեն հավասար քանակի վանկեր (3), երկուսում էլ գլխավորաշեշտ վանկը վերջինն է և դրանք արտասանվում են բարձրացող մեղեդայնությամբ (գծ. 1), սակայն հայերենում տոնի բարձրացումը հնչադասության միջուկում շատ կտրուկ է՝ այսինքն ունի մեծ դիապազոն:

Հետևյալ հնչադասությունում՝ Առաջ այդպիսի ցավեր ունեցե՞լ եմ, տոնի բարձրացումը ունեցել բառում հավասար է 10—11 կիսատոնի, իսկ համապատասխան անգլերենում՝ (Have you had this before?)՝ 7-ի (գծ. 2):

⁶ Л. П. Блохина, Роль супraseгментных характеристик в языке и речи. Звуки, слоговой акцент, интонация, Вильнюс, 1972, с. 143.

⁷ Ա. Խաչատրյան, Բացականչական նախադասությունների հնչերանգը («Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում», Երևան, 1978):

Մեկ այլ հարցական հնչադասությունում՝ Ջես կարո՞ղ ինձ տուն հասցնել, նկատվում է հիմնական տոնի իջեցում ետշեշտ վանկերում և ցածր տոնի անկում՝ վերջում, Այդ նույն նախադասությունը արտասանվել է մեկ այլ տար-



Գծ. 1. Հիմնական տոնի շարժման ուղղությունը անդիերենում և հայերենում:

— — — — — } Այլ կողմում:

Your right side?

բերակով՝ տոնի բարձրացումով կարող և հասցնել բառերի վրա, որը ստեղծում է ողջ հնչադասության կրկնակի բարձրացող մեղեդայնություն:

Նույն պատկերն է հանդիպում երկու այլ հնչադասություններում. Կարելի՞ է ձեզ մի փանի հարց տալ:

Հանա՞խ ե՞ք այս փոդոցով անցնում:

1) . / 2) . / 3) \ /


Վերոհիշյալ արտասանական տարբերակը, երբ շեշտն ընկնում է ժանդակ. բայի վրա, մեր փորձառական նյութում հաճախակի հանդիպող երեւյթ է: Այն նկատել է նաև Ս. Ղուկասյանը⁸, բայց համարել է արտասանա-

⁸ Ս. Ղուկասյան, Հարցական նախադասությունների կառուցվածքը և առանց հարցական բառի հարցումների հնչերանգը, ժամանակակից հայերենում (թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատ), Երևան, 1979:


կան շեղում՝ դրական նորմային շհամապատասխանող արտասանություն: Այդ հարցում մենք այլ կարծիքի ենք. բառի շեղտի փոխադրումը օժանդակ բայի վրա ոճային տարբերակ է, որը բնորոշ է խոսակցական ոճին և միաժամանակ արտահայտում է որոշ հուզականություն: Այսպես՝ մեր փորձառական նյութում կա մի օրինակ, որն ունի երկու հնչերանգային տարբերակ.

Դուք այստեղ մո՞տ ե՞ք ապրում:

Դուք այստեղ մոտ ե՞ք ապրում:



Մեզ թվում է, որ վերջին խոսակցական տարբերակը ավելի հուզական է և այդ առումով այն հակադրվում է առաջինին, որն ավելի շեղոք է ու ավելի բնորոշ գրական ոճին: Առաջինը, թերևս, կարելի է որակել որպես ավելի ավանդական արտասանություն: (Հմմտ. նաև շատ գործածական ձևերի հետ.



Գծ. 2. Հիմնական տոնի շարժման ուղղությունը անդերհենում և հայերենում:


--- } Առաջ այդպիսի ցավեր ունեցե՞լ եք:
 — Have you had this before?

Դուք ե՞ք վերջինը: Գալիս ե՞ս տուն և այլն): Ինչ վերաբերում է համապատասխան անգլերեն հնչադասություններին, ապա այստեղ բոլոր, այսպես կոչված, ընդհանուր հարցումներում նկատվում է բարձրացող տոն (նկատի ունենք նախադասության ավարտի տոնը): Եվ այդ ավարտի բարձրացող տոնը զուգակցվում է նախադասության սկզբի հավասարաչափ իջնող սանդղակով, որտեղ առաջին շեղումված վանկը ունի ամենաբարձր տոնը: Այդ մեղեդայնությունը բնորոշ է անգլերենի ընդհանուր այս (ոչ) տիպի հարցերին: Հայտնի է նաև, որ անգլերենում հստակ տարբերվում են ընդհանուր հարցումների այլ տարբերակներ՝ լրացուցիչ իմաստների երանգավորումով, որոնք արտահայտում

են խոսողի վերաբերմունքը: Նման հարցումները չեն ուսումնասիրվել: Մենք ընտրել ենք ոճային տեսակետից առավել շեղոք հարցեր: Որպես նմուշ կարող է ծառայել հետևյալ անգլերեն հնչադասությունը՝ Have you had this before? «Առաջ այդպիսի ցավեր ունեցե՞լ եք», որտեղ առաջին վանկն ունի առավել բարձր դիրք, այնուհետև համաչափ իջնող սանդղակ, և վերջին շեշտված վանկի վրա տոնը բարձրանում է (գծ. 2): Կամ մեկ այլ օրինակ. Does it hurt when I press? «Երբ սեղմում եմ, ցավո՞ւմ է», որն ունի նախորդի նման մեղեդայնություն:

Քննենք հարցական բառով արտահայտված նախադասությունների հնչերանգը: Հնչադասության միջուկը հայերենում կարող է ունենալ ինչպես բարձրացող, այնպես էլ իջնող տոն: Ամենից հաճախ հնչադասության զխափորաշեշտ վանկը (միջուկը) լինում է հարցական բառը, կամ նրա շեշտված վանկը: Օրինակ. Ի՞նչ է պատահել:


Հարցական բառով հարցումները կարող են ունենալ երկու կենտրոն՝ մեկը հարցական բառի շեշտված վանկում, մյուսը՝ վերջում: Այսպես՝ վերոհիշյալ նախադասությունը արտասանվել է.



Այսպիսով, ստացվում է միևնույն նախադասության երեք իրականացում, երեք տարբեր հնչադասություն՝ վերջում տոնի բարձրացումով կամ իջնումով:


Եթե առանց հարցական բառի հարցումներում միջուկը (հաղորդակցային կենտրոնը) ունի միայն բարձրացող տոն, ապա հարցական բառով հարցումները կարող են ունենալ միջուկի ինչպես իջնող, այնպես էլ բարձրացող տոն: Երբ միջուկը արտասանվում է իջնող տոնով, ապա հարցումը արտահայտում է ավելի թույլ հետաքրքրականություն և ամբողջությամբ հնչում է ավելի կտրուկ: Օրինակ.

Իսկ որտե՞ղ եմ ճաշում:



Նույն նախադասությունը, երբ արտասանվում է միջուկի բարձրացող տոնով (2-րդ հնչադասությունը), մեր կարծիքով, պակասեցնում է կտրականությունը, հնչում է ավելի քաղաքավարի, արտահայտում ավելի մեծ հետաքրքրականություն և ցույց տալիս խոսողի ցանկությունը՝ շարունակել խոսակցությունը: Բերենք մեկ այլ օրինակ.

Անունն ի՞նչ է:



Վերջին (երրորդ) հնչադասությունը զրույցին հաղորդում է ավելի մեծ աշխուժություն և հետաքրքրականություն:

Բերենք մեկ այլ նախադասության 2 տարբեր հնչադասությունների օրինակ՝

Իսկ ինչո՞ւ չե՞ք գնացել վիրահատման:

Ս : \ \
 / /
 Դ : \ \
 / /

Հայերենի հարցական բառով հարցումներին բնորոշ է վերջին անշեշտ վանկերի իջնող տառը, թե՛ն նույնիսկ միջուկի տոնը բարձրացող է: Այսպես, օրինակ, հետևյալ հնչադասության մեջ

Ուրե՞նք է ցավում:

Ս : \ \
 / /

հնչադասության ավարտի տոնը (ետմիջուկային և վերջին վանկում) իջնող է: Նշված նախադասության արտաբերությունը բնորոշվում է հնչադասությունների տարատեսակներով: Մեզ մոտ գրանցված են 6 տարբեր հնչադասություններ: Դրանցից երկուսում նկատվում է բառային շեշտի փոխադրում իր հիմնական տեղից դեպի առաջին վանկ:

Երբ համեմատում ենք անգլերենի համապատասխան նախադասությունը հայերենի հետ, նկատում ենք որոշ ընդհանրություններ: Այսպես, թե՛ անգլերենում, թե՛ հայերենում հատուկ հարցումները (հարցական բառով հարցումները) ունեն բարձրացող կամ իջնող-բարձրացող մեղեդայնություն: Տարբերությունը տոնի փոփոխման եղանակի մեջ է: Չնայած անգլերենի համար ավանդաբար ընդունված է, որ այդ հարցումները արտասանվում են իջնող մեղեդայնությամբ, բայց վաղուց ապացուցված է, որ այն կարող է արտասանվել նաև բարձրացող մեղեդայնությամբ և այդ դեպքում ստանում է քաղաքավարի արտահայտություն կամ իջնող-բարձրացող տոնով, որն արտահայտում է մեծ հետաքրքրականություն: Օրինակներ՝

'What's the matter?

Ս : \ \
 / /

'What's the 'matter?

Ս : \ \
 / /

'Where's the pain?

Ս : \ \
 / /

'Why 'didn't you?

Ս : \ \
 / /

Ընտրեմքային հարցումներ: Ինչպես ցույց են տալիս լսողական փորձերը, յուրաքանչյուր ընտրանքի վերջում տեղի է ունենում տոնի բարձրացում, իսկ վերջին վանկը արտասանվում է իջնող տոնով: Օրինակ.

Քե՞զ ինչ դնեմ՝ զաթա՞, նապոլե՞ոն, թե՞ փախլավա:

'Would you 'like ,tea|or 'coffee?

Անգլերենում նման հնչերանգը բնորոշ է այն նախադասություններին, որտեղ թվարկված են ընտրանքային հարցման բոլոր եզրերը: Այն դեպքում, երբ ոչ բոլոր ընտրանքային եզրերն են թվարկված և լսողին հնարավորություն է տրվում ընտրել այն, ինչ չի հիշատակված հարցման մեջ, վերջին շարույթի տոնը նախորդների նման բարձրացող է: Օրինակ. 'Would you 'like ,tea|or ,coffee? Հայերենում նման տարբերակում չի նկատվում, չնայած հաղորդավարների համար ստեղծված էին համանման իրադրություններ:

Կցորդային հարցումներ: Հայերենում չէ և հա կցորդային հարցումները, ինչպես և անգլերենում, բաղկացած են 2 մասից՝ շարույթից: Առաջինը սովորաբար արտասանվում է իջնող կամ բարձրացող-իջնող մեղեդայնությամբ, իսկ երկրորդը՝ միշտ կտրուկ բարձրացող տոնով: Օրինակ՝ Լիլիթ, քեզ քեյ տամ, չէ՞: Կատակ ես անում, հա՞: Ձեր տունը Քաճաճեռում է, չէ՞:

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, երկրորդ մասի բարձրացող տոնը ընդգծում է, որ հարցը պարունակվում է երկրորդ շարույթում: Բոլոր հաղորդավարները կցորդային հարցումները արտասանել են միատեսակ

հնչե՛րանգով: Այստեղից կարելի է եղրակացնել, որ հայերենում այդ տիպի հարցումներն ունեն միանշանակ և հստակ հնչե՛րանգային պատկեր:

Անգլերենում կցորդային հարցումը ևս բաղկացած է երկու մասից, ընդ որում, առաջին շարույթը նույնպես ունի իջնող մեղադայնություն: Սակայն երկրորդ շարույթը կարող է արտասանվել ինչպես բարձրացող, այնպես էլ իջնող տոնով: Իջնող տոնը հարցին հաղորդում է ավելի մեծ համոզվածություն կամ ինքը՝ խոսողը, փորձում է համոզել լսողին: Անգլերենին վերաբերող մեր փորձառական նյութում դրանցված են այդ 2 տարբեր տիպի կցորդային հարցումները: Օրինակ.

You're Mr. 'Hamilton, | 'aren't you?

You're a friend of 'John's, | 'aren't you?

Հայերենում նման տարբերակում չի նկատվում: Երկրորդ շարույթը միշտ արտասանվում է բարձրացող տոնով:

Հայերենի և անգլերենի համապատասխան կցորդային հարցումների (Ձեր տունը Քամսթեդում է, չէ՞: You live in 'Hampstead, | 'don't you? համեմատությունից պարզ երևում է, որ շնայած այդ երկու լեզուներում մեղեդայնության փոփոխման եղանակը տարբեր է, բայց ընդհանուրն այն է, որ առաջին շարույթում ունենք իջնող մեղեդի, իսկ երկրորդում՝ բարձրացող:

Փորձառական տվյալները հաստատում են լսողական փորձերը, որոշ չափով ճշտելով դրանք: Այսպես, օրինակ, ինտոնոգրամները ցույց են տալիս, որ միջուկային վանկում տոնի բարձրացման դիապազոնը հայերենում հավասար է 11—12 կիսատոնի (այսինքն՝ փոքր սեպատիմա կամ օկտավային), իսկ անգլերենում՝ 7 կիսատոնի (կվինտային): Հարցական բառով հարցումներում հիմնական տոնի աճը հայերենում հավասար է 9—10 կիսատոնի (սեքստա կամ սեպատիմա), իսկ անգլերենում՝ 6-ի (փոքր կվինտա): Ինտոնոգրամները ապացուցում են նաև այն, որ անգլերենում հնչադասության սկզբի վանկերը արտասանվում են ավելի բարձր տոնով, քան հայերենում:

Հայերենի համար նկատվում է ևս մի առանձնահատկություն, որ գլխավորապես վանկը (միջուկը) միշտ արտասանվում է բարձրացող տոնով, ընդ որում այդ բարձրացումը շատ կտրուկ է և ընդգրկում է մեծ դիապազոն, հատկապես այն նախադասություններում, որտեղ հարցը արտահայտվում է միայն հնչե՛րանգով (առանց հարցական բառի նախադասությունների): Իսկ այն նախադասությունում, որտեղ առկա են հարցում արտահայտող քերականական միջոցներ, հարցման հնչե՛րանգը արտահայտվում է ոչ այդքան ուժեղ և կտրուկ:

Ինտոնոգրամների տվյալները հաստատում են ևս մի օրինաչափություն, որը նկատել ենք լսողական փորձերում. այն, որ անկախ գլխավորապես վանկի տոնի փոփոխությունից, ետշե՛շտ վանկերը արտասանվում են իջնող տոնով. Օրինակ. Իսկ իճե՞՞ւ չե՞մ գնացել վիճակագրության տոնի բարձրացման ինտերվալը միջուկում հավասար է 8 կիսատոնի, իսկ ետշե՛շտ վանկերում տոնը ընկնում է 10 կիսատոնով:

Այդ երկու լեզուների հարցական նախադասությունների հնչե՛րանգային կառուցվածքի համեմատությունը բացահայտում է դրանցում գոյություն ունեցող ընդհանրություններն ու տարբերությունները: Ընդհանրություններն են՝ 1. Առանց հարցական բառի հարցումներում տոնը բարձրանում է միջուկային վանկում: 2. Հարցական բառով հարցումներում թե՛ անգլերենում, թե՛ հայերենում մեղեդայնությունը կարող է լինել բարձրացող և իջնող կամ բարձրացող-իջնող: Երկու լեզուներում էլ իջնող մեղեդայնությունը արտահայտում է հարցի կտրակալություն, իսկ բարձրացող տոնը ասածին հաղորդում է ավելի մտե՛րմիկ բնույթ: 3. Ընտրանքային հարցումներում թե՛ անգլերենում, թե՛ հայերենում առաջին շարույթի տոնը բարձրացող է, սակայն երկրորդ շարույթում տոնը հայերենում միշտ իջնող է, իսկ անգլերենում կարող է լինել նաև բարձրացող:

Տարբերություններն են՝ 1. Հայերենի հարցական նախադասություններում գլխավորապես վանկն ունի ամենարարձր տոնը, իսկ անգլերենում տոնի բարձրագույն կետը մեծ մասամբ առաջին շեշտված վանկն է։ 2. Հայերենում միջուկին նախորդող վանկերը արտասանվում են ցածր տոնով, իսկ անգլերենում՝ իջնող մեղեդայնությամբ (հնչադասության սկիզբը միշտ արտասանվում է բարձր տոնով)։ 3. Հայերենում նախամիջուկային անշեշտ վանկերն արտասանվում են միապաղաղ և հավասար տոնով։ 4. Հայերենում միջուկի տոնը միշտ բարձրացող է, իսկ անգլերենում տոնը կարող է բարձրանալ նաև անշեշտ վանկում։ 5. Հայկա ստրբերվում է նաև տոնի փոփոխման եղանակը՝ հայերենում այն կտրուկ է, իսկ անգլերենում՝ ավելի սահուն։ 6. Հայերենում հիմնական տոնի փոփոխման դիապազոնը անգլերենի համեմատությամբ շատ ավելի մեծ է։ 7. Առանց հարցական բառի հարցունքներում, երբ միջուկը արտասանվում է բարձրացող տոնով, ետշեշտ վանկերը արտասանվում են իջնող տոնով, իսկ անգլերենում ետմիջուկային վանկերում տոնը շարունակվում է բարձրանալ։ 8. Հայերենում հնչադասության հաղորդակցման կենտրոնը (միջուկը) իր մեջ է ամփոփում նախադասության և՛ շեշտը, և՛ տոնի բարձրացումը. այն գերիշխում է բոլոր մյուս վանկերի վրա, շեշտագրկելով կամ թուլացնելով դրանցում շեշտը։ Հնչադասության վերջին տոնը էական նշանակություն չունի հարցական նախադասության բնույթի որոշման համար։ Այսպիսով, հարցական նախադասությունները հայերենում և անգլերենում ունենալով մի շարք էական ընդհանրություններ, որոնք բնութագրում են հարցումը որպես ինքնուրույն հաղորդակցային տիպ, ունեն նաև զգալի տարբերություններ, որոնք կազմում են համադրվող լեզուների հնչերանգային յուրահատկությունը։ Այդ տարբերությունները անհրաժեշտ է հաշվի առնել հայկական միջավայրում անգլերենի դասավանդման գործում։

ИНТОНАЦИЯ ВОПРОСИТЕЛЬНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

АМАЛИЯ ХАЧАТРЯН, МАРИНА ГАЛУСТОВА

Резюме

Интонация представляет собой наиболее характерный фонетический признак любого языка, поэтому труднее всего усваивается именно интонация иностранного языка. Верное интонирование создает необходимую общую окраску речи и скрадывает неточности артикуляции отдельных звуков. Между тем вне языкового окружения овладение интонацией требует гораздо большего труда, чем воспроизведение звуков.

Сопоставительное изучение интонационных структур разных языков предполагает прежде всего выбор адекватных коммуникативных типов высказываний, которые в свою очередь определяют выбор аналогичных речевых ситуаций, в которых данные высказывания реализуются.

Основой данного сопоставительного изучения явились вопросительные фразы английского и армянского языков, реализованные в аналогичных речевых ситуациях. Сюда относятся: общий, альтернативный, специальный и разделительный вопросы.

Аудитивный и интонографический анализ полученных данных выявил некоторые закономерности, общие для обоих языков, и различия, которые касаются общей ритмики построения фразы, диапазона движения основного тона, взаимоотношения ударных и безударных слогов, степени выделенности коммуникативного центра высказывания и др.

Выявление этих основных, характерных особенностей интонации сравниваемых языков может способствовать постановке правильной интонации английского языка в армянской аудитории.